«ՏԱԹԵՎ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ *Կրտսեր դպրոցականների հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրումը՝ իբրև ուսուցման և դաստիարակության արդյունավետության բարձրացման կարևոր պայման:*

Առարկան՝ *Տարրական դասարաններում դասավանդվող առարկաներ*

Հետազոտող ուսուցիչ՝ *Նարինե Հարությունյան*

Ուսումնական հաստատություն՝ Երևանի հ. 164 հիմն. դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ....3

Կրտսեր դպրոցականի հոգեբանամանկավարժական բնութագիրը....4

Հիշողություն, ուշադրություն, մտածողություն....7

Անձնավորության ձևավորում....9

Մոտիվացիա....9

Տարիքային առանձնահատկություններ....10

Ընկալում....10

Անհատականությունը....11

Երևակայություն....12

Բարոյական գաղափարների ձևավորում....13

Կրտսեր դպրոցականների ձևավորում....14

Վեց տարեկան երեխայի դպրոցական ուսումնառությանը ներկայացվող պահանջները....15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ....17

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ....18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր ուսուցիչ, մանկավարժ իր գործունեության ընթացում հանդիպում է աշակերտների տարիքային զարգացման օրինաչափությունների ճանաչման և դրանցով առաջնորդման խնդրին, ինչը կարող է նպաստել ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը: Ուսումնական գործունեության ընթացքում ուսուցիչը հանդիպում է այն փաստին, որ յուրաքանչյուր աշակերտ ունի իր անհատական աշխատանքի ոճը, իր ուրույն բնավորությունն ու խառնվածքը, աշխատանքի տեմպը և այլն: Այդպիսի անհատական առանձնահատկությունների ընդունելն ու հաշվի առնելը օգտակար է ուսումնական դժվարությունների լուծման ժամանակ և խթանում է ուսումնական գործունեությանը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել կրտսեր դպրոցականների ընկալման հոգեբանական առանձնահատկությունները, իմացական կարողություններն ու զարգացման առանձնահատկությունները, ինչն էլ կարող է օգտագործվել տվյալ տարիքային խմբի վարքը կանխատեսելու, ուսումնական գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու համար:

Կրտսեր դպրոցականի հոգեբանամանկավարժական բնութագիրը

Կրտսեր դպրոցական տարիքը համարում են մանկության գագաթնակետը: Երեխան պահպանում է շատ մանկական գծեր՝ թեթևամտություն, միամտություն, մեծահասակներին նայում է ներքևից վերև: Սակայն նա այդ ժամանակ սկսում է իր վարքում կորցնել մանկական անմիջականությունը, նրա մոտ հայտնվում է մտածողության այլ տրամաբանություն:

Կրտսեր դպրոցականի տարիքը սահմանվում է երեխայի՝ դպրոց ընդունվելով: Այդ ժամանակահատվածում տեղի է ունենում երեխայի ֆիզիկական և հոգեբանական հետագա զարգացումը, որը թույլ է տալիս դպրոցում ստանալ համակարգված ուսուցում: Ֆիզիոլոգների տվյալներով 7 տարեկանում մեծ կիսագնդերի կեղևը արդեն իրենից ներկայացնում է ինչ-որ չափով որպես հասուն կեղև: Կեղևի կարգավորող համակարգի անկատարելությունը դրսևորվում է տվյալ տարիքի երեխաների վարքի յուրահատկություններում, գործունեության կազմակերպման և հուզական ոլորտում.կրտսեր դպրոցականները հեշտությամբ շեղվում են, պատրաստ չեն երկարատև կենտրոնացմանը, հուզական և գրգռվող են: Կրտսեր դպրոցական տարիքում տարբեր երեխաների մոտ նկատվում է ֆիզիոլոգիական զարգացման անհամաչափություն: Տարբեր սեռերի մոտ նույնպես նկատվում է անհամաչափ զարգացում՝ աղջիկներն ավելի արագ են զարգանում: Հատկապես կրտսեր դպրոցական տարիքում է սկսվում նպատակաուղղված ուսուցումը և դաստիարակումը, երեխայի հիմնական գործունեության տեսակ է դառնում ուսուցման գործընթացը, որը որոշիչ դեր է խաղում նրա հոգեկան հատկությունների և որակների ձևավորման ու զարգացման գործում: Դպրոցում երեխաները ձեռք են բերում ոչ միայն նոր գիտելիքներ և կարողություններ, այլ նաև համապատասխան սոցիալական կարգավիճակ: Փոխվում են երեխայի հետաքրքրությունները, արժեքները, կյանքի նկատմամբ նրա ամբողջ պատկերացումները: Ուսուցման գործընթացի զարգացնող բնույթը, որպես կրտսեր դպրոցական տարիքի հիմնական գործընթաց, կապված է այն բանի հետ, որ նրա բովանդակությունը հանդիսանում է տեսական գիտելիքը: Դպրոցականների ուսուցման գործընթացը կառուցվում է գիտական գիտելիքների

շարադրման միջոցներին համապատասխան, վերացական գիտելիքների բարձրացումով, դեպի կոնկրետ գիտելիքներին գնալու միջոցով: [9]

Կրտսեր դպրոցական տարիքում տեղի է ունենում գիտելիքների զգալի ընդարձակում և խորացում, երեխայի իմացություններն ու կարողություններն են կատարելագործվում:

Դպրոց ընդունվելը երեխայի կյանքում ազդարարում է նոր տարիքային փուլի մասին՝ կրտսեր դպրոցական տարիքի, որի առաջատար գործունեությունը հանդիսանում է ուսուցման գործընթացը: Դրա իրականացման ընթացքում երեխան ուսուցչի օգնությամբ պարբերաբար նվաճում է հասարակական գիտակցության զարգացած ձևերը/գիտություն, մշակույթ, բարոյագիտություն, իրավունք/ և դրանք իրենց պահանջներին ճիշտ օգտագործելու գործունեությունը: Այդ հասարակական գիտակցության բովանդակության ձևերը /գիտական հասկացություններ, գեղարվեստական նկարագրեր, իրավական նորմեր, բարոյական արժեքներ/ իրենցից ներկայացնում են տեսական բնորոշումներ: Այս հասարակական գիտակցության բովանդակության ձևերին տիրանալու ընթացքում երեխաների մոտ առաջանում է իրականության նկատմամբ տեսական վերաբերմունք, գիտակցություն ու մտածողություն և դրանց համապատասխան կարողություններ/ռեֆլեքսիա, վերլուծություն, պլանավորում/:

Կրտսեր դպրոցական տարիքը ընգրկում է 6-10 տարեկանը: Այն անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում այնպիսի մի շրջանի, երբ անհրաժեշտություն է ծագում նոր դերեր կրել, պատասխանատու լինել, տարբեր պահանջներ իրականացնել: Այս շրջանում հակասության մեջ են մտնում երկու հիմնական դրդապատճառ՝ անհրաժեշտության և ցանկության: Մի կողմից, առաջնորդվելով անհրաժեշտության պահանջմունքով, երեխան բացահայտում է հասուն կյանքը, իսկ մյուս կողմից, դրդված լինելով ցանկության պահանջմունքով, երեխան ցուցաբերում է այնպիսի վարք, որը վերադարձնում է իրեն մանկության աշխարհ, որտեղ ամենը ապահով է, ծանոթ, իրականանալի, չկան որոշակի պարտականություններ և պահանջներ: Մյուս կողմից, երեխան իմպուլսիվ է, անհանգիստ, ունի ոչ կայուն ուշադրություն, իսկ մյուս կողմից, քանի որ նրա մոտ արդեն ձևավորվում է պահանջմունքների նոր մակարդակ, նա

սկսում է գործել, առաջնորդվելով որոշակի նպատակներով, արժեքներով, զգացմունքներով: Կրտսեր դպրոցականի զարգացման ընթացքում հստակ երևում են զարգացման որակական փոփոխություններ: Երեխայի հոգեկան զարգացման կենտրոնում է հայտնվում կամածինության ձևավորումը /պլանավորում, գործողությունների զարգացման ծրագիր, վերահսկողության իրականացում/: Այս տարիքի երեխայի զարգացման հիմնական բնութագրերից է այն, որ թեև կտրուկ փոխվում է գործունեության հիմնական ձևը, դեռևս պահպանվում է *խաղալու պահանջմունքը*: Այդ իսկ պատճառով դպրոցական կյանքի սկզբնական շրջանում չափազանց կարևոր է ուսումնական գործընթացում խաղային էլեմենտների առկայությունը, ինչը մեծացնում է երեխայի հետաքրքրությունը ուսման հանդեպ: Մեծ է նաև *շարժվելու պահանջմունքը*, հետևաբար, ուսուցիչը ուսումնական գործընթացը կազմակերպելիս պետք է կիրառի շարժողական խաղեր, որոնք նպաստում են երեխայի ուշադրության զարգացմանը, կենտրանանալու կարողությանը: Ուսուցիչը նաև կարող է հմտորեն կազմակերպել երեխաների հանգիստը՝ ներառելով խաղեր և շարժողական վարժություններ, որոնց ընթացքում երեխան լիցքաթափվում է և կարողանում արդյունավետ շարունակել ուսումը: Կրտսեր դպրոցականի համար նաև չափազանց կարևոր *է նոր տպավորություններ ստանալու պահանջը*, որի հիման վրա ձևավորվում են գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելու պահանջը: Այս պահանջը առաջնորդում է երեխայի զարգանալու, դրդապատճառների նոր համակարգ ձևավորելու ընթացքը: Աշակերտի համար կարևորվում են ուսուցչի գովասանքը, գնահատականը, ավելի ուշ հասակակիցների կարծիքը իր անձի վերաբերյալ: Այս ամենը նպաստում է երեխայի կողմից սոցիալական իր նոր դերերի գիտակցմանը, իր Ես-ի ինքնահաստատմանը: Երեխայի դրդապատճառների առաջացման, հետաքրքրության պահպանման, Ես-ի ինքնահաստատման գործընթացում չափազանց կարևորվում է ուսուցչի դերը: [1]

Հիշողություն, ուշադրություն, մտածողություն

Կրտսեր դպրոցականի հիշողությունը մեխանիկական է և որոշակի մակարդակով զարգացած: Նա հատկապես հիշում է այն, ինչն իրեն առանձնապես զարմացնում է, ինչն անմիջականորեն խարսխվում է նրա հետաքրքրությունների վրա: Նկատի ունենալով, որ այս տարիքում մասնավորապես ակտիվ է երեխաների ճանաչողական հետաքրքրությունները (աշխարհաճանաչողության փուլ է այս տարիքը)՝ ուսումնական նյութը պիտի հագեցած լինի աշխարհաճանաչողական գիտելիքներով, և այդ ամենը ներկայացվի կրտսեր դպրոցականների կենսափորձի հաշվառմամբ: Կրտսեր դպրոցական տարիքին բնորոշ է առարկայականպատկերային հիշողությունը, սակայն կան նաև բառատրամաբանական հիշողության զարգացման բոլոր նախադրյալները:

Կրտսեր դպրոցականների մոտ առավել հաճախ փոփոխման է ենթարկվում հիշողությունը: Վերլուծության ձևավորման ընթացքում երեխաները ձեռք են բերում առաջադրված նյութը իմաստավորված հիշելու ունակությունը՝ նշելով բովանդակային հատկանիշները: Կրտսեր դպրոցականները սկսում են օգտագործել տարբեր ուրվագծային նկարներ՝ իբրև հիշողության միջոցներ: Բովանդակային ռեֆլեքսիայի ձևավորումը նպաստում է այն բանին, որ երեխաները տիրապետում են իրենց գործունեության ինքնուրույն վերահսկմանը ինչպես հիշելու ժամանակ, այնպես էլ նյութը վերարտադրելիս: Կրտսեր դպրոցականները տեսական վերլուծության հիմքի վրա սկսում են գուշակել ոչ միայն առարկաների առանձին մասնավոր փոփոխությունները, այլ նաև դրանց ամբողջական փոփոխության ուղղությունները:

Ուսումնական գործընթացը, գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերումը ենթադրում է աշակերտի ինքնակառավարում, ինչը հնարավոր է իրականացնել լավ զարգացած կամածին ուշադրության դեպքում: Ուսման սկզբնական շրջանում երեխային գրավում է երևույթների միայն արտաքին կողմը, իսկ ուսուցչի դերը կայանում է նրանում, որ պարբերաբար սովորեցնի դիտողականությանը, երևույթների էության ըմբռնմանը, հասկացմանը և այլն: Նպատակահարմար է, օրինակ, խնդրել երեխային ստուգել իր ընկերոջ կամ իր գրածը, համեմատել սկզբնական նյութի հետ, զննել և մտապահել առարկաների կարևոր բնութագրերը և

այլն: Ուսումնական գործունեության ընթացքում մեծահասկաների օգնությամբ երեխայի մոտ զարգանում են ուշադրության բաշխումը և տեղափոխելիությունը: [2]

Ըստ Լ.Ս. Վիգոտսկու՝ եթե նախադպրոցական տարիքի երեխաների հոգեկան գործընթացների մեջ գերիշխող է հիշողությունը, ապա կրտսեր դպրոցական տարիքում գերիշխող է մտածողությունը: Այս հանգամանքով պայմանավորված՝ արագորեն զարգանում են աշակերտի մտածողության տեսակները: Եվ քանի որ մտավոր զարգացման աստիճանով է պայմանավորված մյուս հոգեկան գործընթացների զարգացումը, սրա արդյունքում զարգանում են նաև երևակայությունը, կամքը, զգացմունքները և այլն: Անցում է կատարվում նախադպրոցական տարիքին բնորոշ ակնառու-պատկերային մտածողությունից բառատրամաբանական մտածողության, երեխան կարողանամ է վերլուծել, տրամաբանորեն դատել, մտքեր ձևակերպել: [3]

Կրտսեր դպրոցականի մտածողությունը շատ մեծ փոփոխության է ենթարկվում ուսուցման ընթացքում: Ստեղծագործական մտածողության զարգացումը բերում է ընկալման և հիշողության որակական վերակառուցման: Երկար ժամանակ համարվել է, որ երեխայի մտածողությունը դա մեծահասակի «չզարգացած» մտածողությունն է, որ երեխան տարիների ընթացքում ավելի շատ կիմանա, կխելոքանա և կդառնա հասկացող:

Մտածողությունը ունի երեք հիմնական ձև.ակնառու-գործնական, ակնառու-պատկերավոր, խոսքային-տրամաբանական: Կրտսեր դպրոցականները վերլուծության ձևավորման շնորհիվ հարստացնում են մտածողության բովանդակությունը /այդ ժամանակ երեխան ընդգծում է առարկաներում և երևույթներում էական կապերը և հարաբերությունները/: Կրտսեր դպրոցականների մոտ պլանավորման ձևավորումը թույլ է տալիս նրանց առարկաների, պատկերների հետ գործողություններ կատարելիս նշել նրանց կարևոր կապերը և հարաբերությունները: Իսկ այժմ, հոգեբանները գտնում են, որ երեխայի մտածողությունը որակապես տարբերվում է մեծահասակի մտածողությունից, և այն հնարավոր է զարգացնել՝ միայն հիմնվելով այդ տարիքին բնորոշ հատկությունների գիտելիքների վրա: Երեխայի մտածողությունը շատ շուտ դրսևորվում է, երբ նրա առաջ

որոշակի խնդիր է դրվում/հնարել հետաքրքիր խաղ, մեծահասակի կողմից առաջադրված որևէ խնդիր, որը նպաստում է նրա մտածողության զարգացմանը/:

Ի տարբերություն նախադպրոցականի, խնդիրներ լուծելու ընթացքում կրտսեր դպրոցականը հաշվի է առնում երևույթների այնպիսի հատկությունները, որոնք արտացոլում և հիմնվում են կոնկրետ գիտական հասկացությունների վրա: Սակայն այդ հասկացությունների ընկալման մակարդակը էականորեն կախված է ուսումնական գործունեության կազմակերպման ձևից:

Անձնավորության ձևավորում

Անձնավորության ձևավորումը, ինչը կապված է մոտիվների և ինքնագիտակցության հետ, շարունակում է իր զարգացումը կրտսեր դպրոցական տարիքում: Սակայն կրտսեր դպրոցականը, ի տարբերություն նախադպրոցականի, իր գործունեության մեջ է ներառում նաև ուսումը, որի արդյունքները գնահատվում են մեծահասակների կողմից: [1]

Մոտիվացիա

Դպրոցական առաջադիմությունից, երեխայի լավ կամ վատ սովորելու արդյունքում ստացած գնահատականից է կախված նրա անձնավորության զարգացումը: Մոտիվացիոն ոլորտը, ինչպես կարծում է Ա.Ն. Լեոնտևը, անձնավորության միջուկն է: Ի՞նչն է երեխային առաջ մղում, որո՞նք են նրա ցանկությունները: Երեխայի ուսման սկզբում, ունենալով աշակերտի ներքին դիրքորոշում, նա ցանկանում է սովորել: Նույնիսկ լավ սովորել, գերազանց: Ուսուցման սոցիալական մոտիվներից, երևի թե, ամենագլխավորը բարձր գնահատականներ ստանալն է: Բարձր գնահատականը կրտսեր դպրոցականի համար այլ խրախուսանքների աղբյուր է, նրա հուզական բարեկեցության պայմանը, հպարտության առարկան: Երբ երեխան լավ է սովորում, նրան գովում են և՛ ծնողները, և՛ ուսուցիչը: Ավելին, դասարանում, որտեղ ուսուցչի դերը ոչ միայն որոշիչ , այլև միակ հեղինակություն վայելող կարծիքն է, որի հետ բոլորը հաշվի են նստում, բարձր գնահատականը ապահովում է համապատասխան կարգավիճակ: [4, էջ 126]

Տարիքային առանձնահատկություններ

Կրտսեր դպրոցականի բնավորության տարիքային առանձնահատկություններից են նաև զգայունությունը, բարձր խոցելիությունը, հուզականությունը, հետաքրքրասիրությունը, անմիջականությունը, դյուրահավատությունը, ընդօրինակումը: Նրանք ընդօրինակում են ծնողներին, մեծերին, դիտած կինոնկարների հերոսներին: Այս հատկանիշը, անշուշտ, հնարավորություն է տալիս անձնական օրինակով երեխայի մեջ դաստիարակել արժեքավոր գծեր, սակայն չպետք է մոռանալ, որ կրտսեր դպրոցականը կարող է ընդօրինակել և ոչ միայն լավը, այլև՝ բացասականը: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ ուսուցիչը և երեխայի հետ շփվող յուրաքանչյուր չափահաս իր վարքով ու խոսքով, համոզմունքներով և սովորություններով միայն դրական օրինակ պիտի ծառայի: [4]

Ուսուցիչը կարող է օգտագործել հետևյալ միջոցները՝ տալ երեխային պատասխանելու և մտքերը հավաքելու ժամանակ, նյութը տրամադրել մաս-մաս, ժամանակ տրամադրել դրա ամրապնդման համար, չկատարել հարցում նոր դասի վերաբերյալ, այլ իրականացնել դա մյուս դասին, ինքնավստահություն ձևավորել խրախուսանքների օգնությամբ, հարցում չանել դասի սկզբին, չընդհատել, չշտապեցնել, չխանգարել որևէ գործունեություն կատարելիս: Բարձր դրական մոտիվացիան կարող է լրացնող գործոն հանդիսանալ սովորողների ոչ բավարար բարձր ունակությունների ժամանակ, բայց հակառակ ուղղությամբ այդ սկզբունքը չի աշխատում՝ ոչ մի կարողություն չի կարող փոխհատուցել մոտիվացիայի բացակայությունը, և ապահովել ուսուցման էական առաջընթաց:[5]

Ընկալում

Նախադպրոցականների ընկալումն արդեն բավականաչափ զարգացած է: Նրանք լավ տարբերում են առարկաների ձևը, չափը, գույնը, տարածության մեջ գրված դիրքը: Նրանք կարողանում են պատկերել պարզ ու հասարակ առարկաներ, պահանջվող գույներով ներկել դրանք: Այս տարիքում առաջ է գալիս սինթեզող կամ համադրող ընկալումը.երեխայի զարգացող ինտելեկտն արդեն թույլ է տալիս

իմաստային կապեր հաստատելու ընկալված առարկայի տարրերի և մասերի միջև: Այս տարիքի երեխան կոնկրետ իրավիճակի սահմաններից դուրս որոշ մտահանգումներ և եզրակացություններ արդեն կարողանում է անել:

Ուսուցման գործընթացի սկզբնական շրջանում կրտսեր դպրոցականների ընկալման մակարդակը սերտորեն պայմանավորված է նրանց գործողություններով և պրակտիկ գործունեությամբ: Նրանց ընկալմանը բնորոշ է ցայտուն արտահայտված հուզականությունը, առաջին հերթին ընկալում են այն երևույթները, առարկաների հատկանիշները, որոնք առաջացնում են անմիջական հուզական արձագանք: Սանկավարժական այս հիմնավորմամբ է պայմանավորված տարրական դասարաններում զննականության սկզբունքի ապահովման անհրաժեշտությունը և զգացմունքային խթանիչների կիրառումը, ճշտորեն կազմակերպված ուսուցման գործընթացում կրտսեր դպրոցականների ընկալումն աստիճանաբար դառնում է նպատակաուղղված ու կառավարվող: Նրանք ուսուցչի օգնությամբ սովորում են ոչ միայն պարզապես դիտել, այլև զննել, ուսումնասիրել, բացահայտել առարկաների ու երևույթների էական ու կարևոր հատկանիշները, վերլուծել դրանք, որոշակի եզրահանգումներ անել, կարողություններ, որոնք բարձրակարգ մտածողության բաղադրիչներն են և նպաստելու են հետագա ուսումնական գործունեության արդյունավետությանը: [6]

Անհատականությունը

Անհատականությունը բնութագրվում է անձի մտավոր, կամային, բարոյական, սոցիալական այլ հատկանիշների միասնությամբ, որոնցով էլ տվյալ երեխան տարբերվում է մյուսներից: Անշուշտ, յուրաքանչյուր երեխա եզակի է և անկրկնելի, իր անհատականությամբ՝ բացառիկ, և համարվում է հասարակության համար բարձրագույն արժեք: Անձի անհատականությունն արտահայտվում է նրա անհատական ինքնատիպությամբ, զգայությունների յուրահատկությունները, ընկալման, մտածողության, հիշողության, երևակայության, հետաքրքրության, հակումների, ընդունակությունների, խառնվածքի, բնավորության զանազանությունը: Ճանաչելով մարդու անհատական-հոգեբանական և տարիքային

առանձնահատկությունները, իմանալով նրա կենսապայմանները՝ կարելի է արդյունավետ կրթական միջավայր ստեղծել նրա իմացական ներուժի, ակտիվության, ունակությունների, օժտվածության, տաղանդի բացահայտման և զարգացման համար: Անհատական առանձնահատկությունների հաշվառումը և երեխայի բացառիկության, անկրկնելիության արժևորումը հումանիստական մանկավարժության հիմնարար սկզբունքներից են և երեխայակենտրոն կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացման հիմնական պահանջը:

Երևակայություն

Կրտսեր դպրոցականների ընդգծված իմացական գործընթացներից է նաև երևակայությունը: Երեխան կարող է ոգևորվել նաև հեքիաթում նկարագրված ոչ իրական դեպքերով, խոսող ծառերով և թռչող ավելով, հավատալ բարի հերոսի հաղթանակներին ու չարի կործանմանը: Սա նրանց երևակայության «ոչ հողածին», «ոչ երկրային» հատկանիշն է, որը պիտի անպայման օգտագործվի որպես զգացմունքային խթանիչ: Այս իմաստով ամենից առաջ կատարելագործվում է վերստեղծող երևակայությունը, որը պայմանավորված է նախկինում տեսածը, կարդացածը, լսածը երևակայությամբ պատկերացնելու, կամ նկարագրությանը, նկարին, սխեմային համապատասխան կերպարներ ստեղծելու նրա կարողությամբ:Կրտսեր դպրոցականի մոտ վերհիշածը արտաբերելիս ստացվում է պատմվածքատիպ և անհասկանալի ինչ-որ բան: Սակայն իրենց համար այդպիսի պատմվածքը հաճույք է պատճառում և այդ ամենը շատ հասկանալի է: Կրտսեր դպրոցական տարիքում ընկալման սրությունը, խոսքային մտածողության անհրաժեշտ նախադրյալների առկայությունը, մտավոր ակտիվության ուղղվածությունը դեպի կրկնվելու և ընդունելու ուղղությամբ՝ ստեղծում են հոգեկանի զարգացման և հարստացման համար բարենպաստ պայմաններ: Կրտսեր դպրոցական տարիքի երեխաները ընկալելով մարդկանց առանձին հույզեր՝ դրանք աղավաղում են և թույլ են տալիս կոպիտ սխալներ: Նրանք կարող են մարդկանց որոշ ապրումները չհասկանալ և այդ իսկ պատճառով՝ դա իրենց անհետաքրքիր և անհասկանալի կլինի:

Կրտսեր դպրոցականի ձևավորման կարևորագույն նախապայման է նաև ստեղծագործական երևակայությունը: Ցանկացած առարկայի յուրացումն անհնար է առանց երևակայության ակտիվ գործունեության: Հնարավոր չէ գրքում գրվածը, ուսուցչի ասածը յուրացնել առանց պատկերացման, երևակայելու, ակնառու պատկերների հետ գործողություններ անելու ունակության: Կրտսեր դպրոցականների երևակայությունը կարող է զարգանալ նկարչական աշխատանքի ժամանակ:

Գեղարվեստական ձևով ներկայացված բանաստեղծություններից և պատմություններից, թատերական ներկայացումներից, երգերից, երաժշտական պիեսներից և հեռուստաֆիլմերից ստացված տպավորությունները կարող է խորը ազդեցություն թողնել 8-10 տարեկան երեխաների մոտ: Զայրույթի, կարեկցանքի, խղճի, սիրելի հերոսի բարօրության համար անհանգստության զգացումը կարող են հասնել ուժեղ ինտենսիվության:

Երեխաների մոտ իրատեսական հետաքրքրությունները ի հայտ գալը ստիպում է նրան ուշադրություն դարձնել նաև ուրիշ մարդկանց ապրումների վրա, հասկանալ նրանց օբյեկտիվ կերպով: Երեխան սկսում է հասկանալ օտար մարդու տառապանքը իբրև տվյալ մարդու տհաճ ապրում: Երեխայի մինչ այս փուլը անվանում էին էգոիստական շրջան, սակայն այս փուլում այն կարելի է համարել որպես այլասիրական դրսևորումների շրջան:

Բարոյական գաղափարների ձևավորում

Կրտսեր դպրոցական տարիքը հանդիսանում է բարոյական գաղափարների ձևավորման դասական ժամանակաշրջան: Երեխան այդ տարիներին ցուցաբերում է յուրահատուկ հնազանդություն, նա հետաքրքրությամբ և ոգևորությամբ ընդունում է տարբեր օրենքներ և կանոններ: Նա ունակ չի լինում ձևավորել իր սեփական բարոյական գաղափարները և ձգտում է հասկանալ, թե ինչ է անհրաժեշտ անել: Կրտսեր դպրոցականը մեծահասակներից վերցնելով բարոյական գնահատականների չափանիշները՝ սկսում է ուրիշ երեխաներից պահանջել այդ չափորոշիչներին հետևել: Նրանց հետաքրքրությունը գրավում են արդեն այն բաները, որոնք նախկինում կամ ներկա պահին չեն նկատվել: Այլ ազգերը, ուրիշ երկրները սկսում են ինտենսիվ

կերպով գրավել կրտսեր դպրոցականի ուշադրությունը: Մտահորիզոնի վիթխարի լայնացում է տեղի ունենում: Կրտսեր դպրոցական տարիքի ավարտին արդեն նկատվում են այդ տարիքի երեխաների և նախադպրոցական տարիքի երեխաների միջև հսկայական անհատական տարբերություններ: Այդ տարիքում արդեն հստակ նկատվում են երեխայի հակվածությունը ինչ-որ առարկաների նկատմամբ՝ հումանիտար, բնագիտական:

Կրտսեր դպրոցական տարիքում բուռն կերպով հարստանում է երեխայի բառապաշարը, զարգանում է կապակցված խոսքը: Պետք է օժանդակել այս գործընթացին՝ ապահովելով հարուտ խոսքային միջավայր /գրքերի ընթերցում, ֆիլմերի դիտում, խոսքի ունկնդրում/, դասաժամերին ստեղծելով արտահայտվելու, հաղորդակցվելու հնարավորություններ, առաջացնելով արտահայտվելու, գեղեցիկ խոսելու պահանջմունքներ: Կարևոր դեր են խաղում գիտական հասկացությունների ձևավորումը, որն ընթանում է ֆունկցիոնալ հատկանիշների առանձնացումից մինչև էական հատկանիշների առանձնացումը: Գիտական հասկացությունների ձևավորման գործընթացում զարգանում են երեխայի մտածողության բոլոր գործընթացները:

Կրտսեր դպրոցականների ձևավորում

Կարելի է փաստել, որ կրտսեր դպրոցական տարիքում երեխաները ունենում են հետևյալ ձեռքբերումները՝

- իմացական ոլորտի զարգացում
- աֆեկտիվ-պահանջմունքային նոր մակարդակի ձևավորում, ինչը թույլ է տալիս գործել ոչ թե անմիջականորեն, այլ առաջնորդվելով հստակ գիտակցված նպատակներով, բարոյական նորմերով և արժեքներով;
- հարաբերականորեն կայուն վարքաձևերի ձևավորում
- երեխայի սոցիալական ուղղվածության զարգացում: [7]

Վեց տարեկան երեխայի դպրոցական ուսումնառությանը ներկայացվող պահանջները

Վեց տարեկան երեխային հատուկ ուշադրություն պետք է դարձնել, թե նա պատրաստ է արդյոք դպրոցական կյանքի և ուսումնառության համար: Սա չի նշանակում միայն կարդալ-գրել, հաշվել իմանալ, այլ ընդգրկում է երեխայի անձի բոլոր կողմերը՝ սկսած ֆիզիկական զարգացումից մինչև հատուկ գիտելիքների և կարողությունների առկայությունը:

Դպրոցին պատրաստվածության հիմնախնդիրները բաժանվում են չորս խմբի.

1.Սոցիալական

2.Ֆիզիկական

3.Հուզակամային

4.Իմացական:

1.Սոցիալական պատրաստվածությունն իր մեջ ներառում է երեխայի՝ հասակակիցների հետ շփվելու, իր վարքը խմբի կանոններին ենթարկելու, աշակերտի դերը կատարելու պահանջը:

2.Ֆիզիկականն ընդհանուր առողջությունն է. կանոնավոր քաշը, հասակը և այլն, որոնք համապատասխանում են 6-7 տարեկան տղաների և աղջիկների ֆիզիկական զարգացածության պահանջներին:

Երեխայի նյարդային համակարգի վիճակը, ընդհանուր առողջական վիճակը: Լսողության, տեսողության, մատների մոտորիկայի զարգացվածության աստիճանը:

3.Հուզակամային պատրաստվածությունը անմիջական ցանկությունները սեփական կամքին ենթարկելու կարողությունն է: Դպրոցական կյանքին հարմարվելը երեխայի համար դժվար է, եթե նա չի կարող տիրապետել և ղեկավարել իր սեփական անձը: Նա պետք է ժամանակին դպրոց գա, առաջադրանքները կատարի, որոշակի ժամանակահատվածում նստի դասարանում:

4.Իմացական ոլորտն իր մեջ ներառում է ուշադրություն, հիշողություն, երևակայություն.մտածողություն, ինչպես նաև ձեռքի մանր մոտորիկայի զարգացվածության աստիճանը: Ձեռքի մանր մոտորիկայի զարգացվածությունը նպաստում է խոսքի զարգացմանը: Նկարչությունը, ապլիկացիան, գրաֆիկական

վարժությունները նախապատրաստում են նախադպրոցականներին գրելու հմտությանը:

Այս գործընթացները պահանջում են առանձնահատուկ ուշադրություն, քանի որ այս տարիքում դրանք առավելապես ենթակա են զարգացման և կատարելագործման, և դրանց զարգացվածության աստիճանից է մեծապես կախված ապագայում երեխայի հարմարված, հոգեբանորեն հասուն և հաջողակ լինելը: [8]

Ուսումնական գործընթացում, վերացականից անցումը կոնկրետի, կարճ կարելի է բնութագրել հետևյալ կերպ.ինչ-որ ուսումնական առարկայի յուրացման ընթացքում դպրոցականները ուսուցչի օգնությամբ վերլուծում են ուսումնական նյութը, ընդգծում են նրանում որոշ ընդհանուր հարաբերություններ՝ դրանով բացահայտելով, որ այն դրսևորվում է ուրիշ այլ հարաբերություններում ևս, որը գոյություն ունի տվյալ նյութում:

Երբ դպրոցականները սկսում են օգտագործել ելակետային վերացարկումը և ընդհանրացումը, նրանք այդ մտային գործողությունները վերածում են հասկացությունների:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, կրտսեր դպրոցական տարիքը կյանքի կարևորագույն փուլերից մեկն է, որից է կախված մտածողության և անձնավորության մակարդակը, սովորելու ցանկությունը և կարողությունը, սեփական ուժերի նկատմամբ հավատը: Սոցիալական կարգավիճակի փոփոխության արդյունքում երեխան դուրս է գալիս ընտանիքի սահմաններից՝ ընդլայնելով հաղորդակցման շրջանակը: Անձի կայացման կարևորագույն այս փուլում անհրաժեշտություն է ծագում նոր դերեր կրել, պատասխանատու լինել, տարբեր պահանջներ իրականացնել: Կրտսեր դպրոցական տարիքը հանդիսանում է ճանաչողական գործընթացների ինտենսիվ զարգացման և որակական կատարելագործման ժամանակաշրջան: Նրանք սկսում են ձեռք բերել միջնորդավորված բնավորություն և դառնում են ավելի գիտակից ու ազատ: Երեխան աստիճանաբար տիրապետում է իր հոգեկան գործընթացներին, սովորում է ղեկավարել իր ուշադրությունը, մտածողությունը, հիշողությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բալյան Ա.Ա Մանկավարժական հոգեբանության հարցեր - Երևան: Լույս, 19831.
2. Կրուտեցկի Վ.Ա., Մանկավարժական հոգեբանության հիմունքներ, 1976, 442 էջ:
3. Виготски “Педагогическая психология”. 2004 "...Издательская корпорация «Логос» Москва, стр 384
4. Шаповаленко И. В. “Возрастная психология (Психология развития и возрастная психология)” Москва 2005, 350 стр
5. Мухина В.С., Детская психология. М. 1985, стр. 10-28.
6. Изард К. Э. “Психология эмоций”. СПб, Питер, 2006г., стр 46
7. Мухина В. “Возрастная психология. Феноменология развития”10-е изд., перераб. И доп. – М.: 2006.- 608 с
8. Кулагина, И.Ю. Возрастная психология: Развитие ребенка от рождения до 17 лет.Учебное пособие.4-е издание.И.Ю.Кулагина.-М.: Издательство Университета Российской академии образования, 1998.
9. Выготский Л.С. Воображение и творчество в детском возрасте Л.С. Выготский.-М. Феникс, 1999